

Տարեկան գինը 10 ռուբլի էս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“)

ՄԵՆԿ

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նախի կիրակի և Կոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Վարժակիցների խնդիրը.— Եւրոպայի տեսու-
թիւնը: Նամակ երկանից.— Արտաքին տե-
սութիւն: Բելգիա: Աֆղանիստան: Նամակ
Թիւրքիայից: Նամակ Թիւրքիայից.— Մշակիւն հե-
ռագիրներ: Յայտարարութիւններ: Բանասի-
րական: Նամակ Շամախուց:

ՎԱՐՇՈՒՅԻՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Ընդադար մեր լրագիրների մէջ
տարվում են յայտարարութիւններ
մեր գաւառական այլ և այլ քա-
ղաքների օրիորդական դպրոցների
կողմից, որոնցով հրաւիրվում են
յիշեալ դպրոցների համար վար-
ժուհիներ:

Գաւառական հայաբնակ քաղա-
քները միշտ թիֆլիսին են դի-
մում թէ ուսուցիչներ և թէ վար-
ժուհիներ իրանց դպրոցների հա-
մար հրաւիրելու նպատակով: Գա-
ւառացին առում է թիֆլիսում
կայ Ներսիսեան դպրոց, թիֆլի-
սում կայ Գայեանեան օրիորդական
դպրոց, առաջինը ուսուցիչներ է
պատրաստում, երկրորդը վարժու-
հիներ է պատրաստում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

26 յուլիսի

«Մշակ» լրագրի մէջ ուրախութեամբ կարդում
ենք այն յօդուածները, որոնք պարունակում են
իրանց մէջ լուսաւորչական, բողոքական և կաթո-
լիկ հայերին իրար մօտեցնելու և ազգային խնդիր-
ներին վերաբերեալ անհրաժեշտ միաբանութիւնը
ձեռք բերելու վանքը: Գովիւն է յիշեալ լրագրի
բանաձև ներկայիս իմաստուն ընթացքը, որը յոյս
է տալիս մեզ, որ կրօնական խնդիրների պատճա-
ռաւ իրարից օտարացած հայ եղբայրները՝ մուս-
նաւով անցնելու, ճանաչելու միմանց ինչպէս հարա-
դատ արկունակից եղբայրներ, ձեռք ձեռքի տուած
սիրով և միաբանութեամբ աշխատեն ազգօգուտ
գործերի մէջ, չը դիպչելով ի հարկէ իրար կրօնա-
կան համոզմունքներին: Կրօնական համոզմունքը
իրաքանչիւր մարդու խղճի և Աստուծոյ մէջի բան
է, որի վրա ոչ մարդացեալ Աստուծոյն և ոչ էլ
նրա աշակերտները կամեցան իջնել: Աստուծոյ
տուել է մարդուն ազատ կամք և համոզմունք, ո-
րոնց մէջ սխալութեան զատաստանը չէ տալիս
ոչ պողոտեանների և ոչ ապօրոտեանների ձեռքը,
այլ խնդում է իրան միայն: Աւստի մեծ ծառայու-
թիւն արած պիտի չը լինի Բարձրախիւն, եթէ
միշտ աշխատենք ատելութեամբ և հալածմունքով
փոխել մեր եղբոր համոզմունքը և ստիպել նրան
ակամայ ընդունել այն ինչ որ ընդունում ենք մենք,
որը անհնար է և ընդդէմ մարդկութեան ազատ
իրաւունքներին: Խղճի և համոզմունքի ազատու-
թիւնը մարդու սեփականութիւնն է. խլել նրա-
նից այդ ազատութիւնը նշանակում է զրկել նրան
իր սեփականութիւնից և ցերեկ անը օտարի համոզ-

Բայց Ներսիսեան դպրոցի վե-
րաբերութեամբ մենք արդէն մեր
կարծիքը յայտնեցինք, ցոյց տալով
թէ անհնարին է այդ դպրոցից
սպասել որ նա պատրաստի կրթ-
ված մանկավարժներ: Բայց այնու-
ամենայնիւ, երբ մի գաւառական
քաղաքից յայտարարութիւն է լի-
նում, որով հրաւիրվում է ուսու-
ցիչ այս կամ այն գաւառական
դպրոցի համար, դարձեալ գտն-
վում են թիֆլիսում վարժապետ-
ներ, որոնք պատրաստ են գնալ
գաւառները:

Բայց Գայեանեան օրիորդական
դպրոցից, չը նայելով որ այդ դը-
պրոցը համեմատաբար աւելի բարձր
է իր ուսման ընթացքով, իր կազ-
մակերպութեամբ ու կանոնաւո-
րութեամբ, քան թէ Ներսիսեան
դպրոցը, դարձեալ երբէք չեն գը-
տնվում օրիորդներ, որոնք պատ-
րաստ լինէին գնալ գաւառներ
վարժուհիների պաշտօնը ընդու-
նելու համար:

Թիֆլիսում ուսում աւարտած

մուսլիմ, Մենք տեսնում ենք մարդիկ մի և նոյն
բանի վրա զանազան համոզմունք և դադարաւոր ու-
նեն, վստահութիւն համոզմունքի տարբերութեան պատ-
ճառաւ այս լուսաւորեալ դարում արկունակից եղ-
բոր թշնամի դառնալ անհերքելի սխալմունք է
մանաւանդ կրօնական խնդիրների մէջ: Աւստի
թող տուր մարդուն իր կրօնական հայելին իր Աս-
տուծոյ հետ տեսնել, ինչպէս նա համոզված է,
որը սորանում ուրիշի հայել տալ պարտաւոր չէ,
քանզի նրան դատողը և արդարացողը Աստուծոյն
է: Մի խառնուրդ օտարի գործի մէջ, քեզ Աստու-
ծոյ հաւատարմի ծառայ ցուցանելով, այլ բաւա-
կանացիը նրանով թէ որ կարող եղար քո աշխա-
դանքը եղբորը ազգային ընդհանուր խնդիրների
մէջ համոզմունքները քեզ, Բայց սա ուրիշ կերպ
չէ կարող լինել, եթէ ոչ քեզ նրան անկեղծ և հա-
ւատարմի բարեկամ ճանաչանքով: Ինչ է պատ-
ճառը, լուսաւորչական հայ եղբայր, որ հալածում
է քո արկունակից հայ-բողոքական և հայ-կաթոլիկ
եղբայրները, չէ որ նրա համար, որ նրանք այն
կրօնական համոզմունքը չունեն, ինչպէս դու և
կը կամենայիր թէ որ ճշմարտապէս Սատուդեան
հոգեւոյ Աստուծոյ եկեղեցւոյ նախանձաւորն էս,
որ նրանք ևս քեզպէս հաւատալին և քեզպէս մը-
տածէին հոգեւոյ փրկութեան վրա, թէ ոչ կորած
են: Նպատակը բարի է, բայց ասա խնդրեմ, որ
ճանապարհով կարելի էր քեզ հասնել բոլոր ճան-
քին, հալածմունքի թէ սիրոյ և յորդորանաց ճա-
նապարհով: Չէ որ ամենապիտաւ համոզմունքն ան-
ղամ հալածանաց մէջ աւելի հաստատվում է և
խոր արմատ գցում մարդու սրտի մէջ: Թէ չես
ուզում հայ-բողոքականների և հայ-կաթոլիկների
թիւը չափանայ, դադարիւր նրանց հալածելուց,
թողնելով կրօնական վեճերը մի կողմը մենք դա-
նազան դաւանութեան պատկանող հայերս մօտե-
նանք իրար սիրով, բարեցրութեամբ և միաբանու-
թեամբ գործենք ազգիս յառաջդիմութեան համար,
սա ինքն դուռն կը բանալ մեզ ժամանակով մօտե-
նալու իրար և կրօնական խնդիրների մէջ անգամ,
Մարդ մի և նոյն համոզմունքի չէ մնում ամեն

հայ աղջկեք երբէք չէ համաձայն-
վում թիֆլիսից հեռանալ և մի
որ և է պաշտօն վարել գաւառա-
կան մի ուսումնարանում: Պատ-
ճառը գուցէ այն է, որ թիֆլի-
սեցի հայ օրիորդը միշտ ճշմարիտ
է նախապաշարմունքի տակ, ա-
ւանդական կապերով կապված է
իր նեղ շրջանի, իր ընտանիքի
հետ: Թիֆլիսի հայ աղջկեք միայն
այն ժամանակ կը համաձայնվի
հեռանալ թիֆլիսից, երբ կը
պսակվի մի տղայի հետ, որի
պարապմունքն ու պաշտօնը գա-
ւառներումն է: Բայց մենակ գը-
նալ իր ապրուստը իր աշխատան-
քով ապահովանալու համար,—
թիֆլիսեցի հայուհին իր արժա-
նաւորութեանց ստոր է համարում,
չը նայելով որ գաւառական վար-
ժուհիներին առաջարկվող ուսուցիչ-
ները բաւական գրաւիչ են:

Թիֆլիսեցի հայերը առհասարակ
և մասնաւորապէս թիֆլիսեցի հա-
յուհիները իրանց ընտանեկան
չափից դուրս անշարժ, նախապա-
շարմունքով Պոլսոյ առաքեալն ուղարկ
համոզված էր հրէից օրէնքների մէջ և ինչպէս իր կրօնի
նախնաձաւոր դաւած եռանդով հալածում էր ըը-
րիստոնեաներին, որ նոյն օրէնքներին չէին հնա-
զանդում, բայց ինչպէս չուտով փոխում է նա իր
կրօնական համոզմունքը և սկսում մարտաւել ընդ-
դէմ այն կրօնին, որի աղօթեանն էր հանդիսա-
նում իր ժամանակին: Ոչ մի եկեղեցի թող չը
կարծէ, որ նրա բոլոր օրէնքները, կանոնները և
խկ համոզմունքը այն աստիճանի անսխալ
և Աստուծոյ ակտաւարանին համաձայն են, որ նրանից
այժմեան լուսաւորեալ դարում մին կէտ ոչ կա-
րելի է պակասացնել և ոչ աւելացնել: Առաքեալ-
ներն անգամ իրանց կենդանութեան ժամանակին
Աստուծոյ նորակառօյց եկեղեցւոյ մէջ ժամանա-
կին նայելով փոփոխութիւններ արին, նրանք առաջ
համոզված էին, որ սրբութեան հայրը և զինին
առհասարակ հացիկերութեան ժամանակ ամեն մի-
նը կարող է վեր առնել ինքը ուտել և խմել: Վասն-
որոյ մի առժամանակ թող տուէր քրիստոնեանե-
րին սրբութեան ընթերցել խորհուրդը այդ տեսակ
կատարելու, բայց երբ տեսան սրա դառն հե-
տեանքը, փոխեցին այդ կարգը, առանձին մար-
դիկ ընտրելով նրան մատակարարելու համար: Երբ
որ առաքեալներն այդ կարճ միջոցում փոխում են
իրանց համոզմունքը և ստիպվում նորոգութիւններ
մտնելու: Աստուծոյ նորակառօյց և աւելորդա-
պաշտութիւնից մարդու եկեղեցւոյ մէջ, ապա ինչ
մեծ բան է այժմեան թէ լուսաւորչական, թէ բո-
ղոքական, թէ կաթոլիկ և թէ այլ եկեղեցիների
հետ այնպէս վարվել, երբ դարերի ընթացքում
եղել են նրանց մէջ պօրոնանքներ և ապօրոտեան-
ներ և նրանց իրաքանչիւր կարգի հոգեւորականնե-
րը իրանց հասկացողութեան համեմատ մի բան
աւելացրել են կամ պակասացրել նրանց մէջ: Վեր-
առ կարդա զանազան եկեղեցիների աստուծա-
բանութիւններն և տես թէ որքան տարբեր դադա-
րաներ, նպատակներ, բացատրութիւնք այն և անհա-
մաձայնութիւններ կան մի և նոյն եկեղեցւոյ վար-
դապետների մէջ: Հիմա ո՞վ կը յանդգնի ասել,

չարված պահպանողական են, սե-
փական խնդիրներից զուրկ են,
անընդունակ են նոր մտքեր, նոր
գաղափարներ սեփականացնելու,
նոր, ժամանակակից շարժմանը
յարմարվելու: Թիֆլիսեցին հնա-
մուլ է:

Գաւառացի հայը աւելի շարժ-
վող է, աւելի առաջադէմ է, ա-
ւելի նորասեր է, աւելի ընդունակ
է նոր գաղափարներ, կենքի նոր
եղանակներ իրացնելու:

Եւրոպայում մեր կառա-
չարկէինք մեր գաւառացի հայե-
րին, որպէս զի նրանք անդադար
կարօտութիւն չը գգային վարժու-
հիների մէջ իրանց իդական դըպ-
րոցների համար, այսուհետեւ այլ
ևս երբէք յոյս չը գնեն թիֆլի-
սեցի հայ օրիորդների վրա, այլ
իրանք մտածէին իրանց քաղաք-
ներից աշակերտութիւն ուղարկել
Թիֆլիսի Գայեանեան դպրոցը,
որպէս զի իրանց դպրոցների հա-
մար իրանց հաշուով վարժուհիներ
պատրաստեն:

Թէ այս կամ այն ինչ երեկի աստուածաբանի
գրուածներն անկարելի է մարդկանց այժմեան գա-
ղափարները և հասկացողութիւնները աւելի հասուն
և զարգացած ժամանակը անաչառ կրկնակալ
ենթարկել: Կը դաջ ժամանակ և կը դաջ մեր լու-
սաւորեալ ապագայ սերունդը, որին յոյս կայ որ
յաջողի և կրօնական համոզմունքների տարբերու-
թիւնները վերացնելու և զանազան դաւանու-
թեան պատկանող հայերից կազմելու մի ամբողջ
եկեղեցի, մի կողմը գնելով ի հարկէ լուսաւորչա-
կան, բողոքական և կաթոլիկ տիտղոսները, կօչե-
լով նրան շատ կարելի է ընդհանրական հայոց բա-
րեկարգեալ եկեղեցի կամ մի աւելի յարմար անու-
նով: Սա մեզ համար դեռ վաղ է, համարեա թէ
անկարելի է, քանզի մեզ ազգը տակաւին զարգա-
ցած չէ և յայտնի է, որ ֆանատիկոսութիւնը ազ-
գի անկրկնելի մասի վրա մեծ ուժ և ներգործու-
թիւն ունի: Բայց յառաջ քան սա, մենք դաւա-
նութեան պատճառաւ ցիր ու ցան եղած բոլոր
հայերս պարտ եմք հոգալ ամբողջ ազգ դառնալու
որ կարող լինի մեզ ապագայում ամբողջ եկեղեցի
կազմելու, թէ ոչ մենք ատելով և կծկելով իրար
աւելի կօտարանք իրարից և կը հեռանալու բուն
խկ խնդրից, որով և պատճառ կը տանք մեր սե-
րունդին մեզ անիծելու, քանզի մենք նրա գործը
գիտարացրած կը լինենք ապագայում և արգելք
դաւած այդ դեղեցիկ նպատակին հասնելու: Մի-
միայն փափաքելի էր մեզ ազգիս լուսաւորութեան
և բաղդաւորութեան վրա ուրախացողներին, որ
հայոց լրագիրներն սիրով և միաբանութեամբ գոր-
ծէին ազգիս միութիւնը պահպանելու, մին աչքով
նայելով ամեն մի դաւանութեան պատկանող հայի
վրա, ինչպէս անում է «Մշակ»ը, բայց տեսնելով
դոցա անմիաբանութիւնը, յատուկ նորոգվում են
մեր հին ցաւերը, մեր անցեալը, երբ ազգիս ան-
դամների անմիաբանութեանը զոհ եղան նրա լու-
սաւորութիւնը, տեսակ տեսակ շահերը, թաղաւորա-
կան զանք, այն և նոյն խկ ամբողջ ազգն անգամ:

Հայ-աւետարանական

Պատահական մի քաղաքի հասարակութիւնը իր հաշուով կուղարկի թիֆլիս մի օրիորդին, այդ օրիորդը կապրի այստեղ մի հայ ընտանեկանում, որին կը վճարվեն քանի տարուց յետոյ, նա կաւարտի իր ուսումը, նրա մայրենի քաղաքը միջոց կունենայ իր սեփական վարժուհի ունենալ իր իգական դպրոցի մէջ:

Այդպիսով մեր բոլոր գաւառական քաղաքները, որոնք ունեն իգական հայոց դպրոցներ և որոնք կարօտ են կրթված, պատրաստված հայ վարժուհիների, կարող են միշտ իրանց հաշուով իրանց սանուհիներ պահել թիֆլիսի Պատանեան դպրոցի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 25

«ՕՃՅՈՐԵՆ» լրագրի № 545 տպված էր մի թղթ-թակցութիւն՝ երեւանից, որի մէջ 'ի թիւս միւս անհիմն տեղեկութեանց նամակադիրը ասում է թէ մեր քաղաքում երեւոյեան մուծը պատեւուն պէս փողոց դուրս գալ չէ կարելի աւաղակների և չարագործների երկրպագ, ոչ թէ միայն քաղաքի խուլ անկիւններում, այլ և քաղաքի բազմամարդ կենտրոնումն էլ: Յետոյ բերելով մի քանի չինոս օրինակներ, նամակադիրը աւելացնում է թէ օրերումս պ. թայրեանցի տանը հըրաւրված են լինում մի քանի տիկիներ լոտո խաղալու համար, և ժամը ութին կամ իննին երեկոյեան յարձակվել են այդ տան վրա չարագործ, անպիտան աւաղակներ թուրքի չորերով և բռնադատել են տիկիներին, այնպէս որ դժբաժնից ևս չեն ունեցել մինչև անգամ ձայն էլ արձակելու և ազատվելու աւաղակաց ձեռքից և այլն... Այդ անցքին շատ մօտ ծանօթ լինելով, և ճշմարտութիւնը վերականգնելու համար պարտք եմ համարում հաղորդել թէ ինչ է պատահել պ. թայրեանցի տանը: Յունիս ամսի 12-ին, օրն հինգշաբթի, երեկոյեան ժամը 5-ին պ. թայրեանցի գերդաստանը հրաւիրում է իր տանը աւելի քան տասը ծանօթ տիկիներ որպէս հիւրեր, և երբ որ դալիս են, դոցա մի քանիսի զոտիկները և զլխի ապրեւումի աղւորները տանտիկինը ժողովում է մի առանձին սենեակում և դարսում է մի սեղանի վրա, որը դրած է լինում լուսամտի առջև, որ բացվում էր դէպի փողոցը, լուսամտը կիսաբաց է լինում, իսկ տիկին հիւրերը դահլիճում լոտո են խաղում: Եւ երբ ժամ 9-ին վեր են կենում տուն գնալու, սենեակում են, որ հինգ հատ զոտիկ և երեք հատ զլխի աղւոր լուսամտից դուրսը տարել են: Եւ որպէս երևում է, փողոցի կողմից ձեռք են մեկնել ու գողացել: Ահա այսպիսի մի հասարակ անցք որպիսի անազնու և կեղտոտ մտքով է նկարագրում «ՕՃՅՈՐԵՆ» լրագրի թղթակիցը: Աւելացնում են, որ պ. թայրեանցի տունը գտնվում է մեր քաղաքի կենտրոնում, ամուր և բարձր շինված, չորս կողմի բնակվում են երեքի անձինք որպէս նահանգապետը, նրա օգնականը, կնիակ Մաշաբեկովը, և չրջապատված է նշանաւոր շինութիւններով, որպիսին է նահանգական կառավարութիւնը, Սկրուժնոյ Սուզը և քաղաքի հաշտարար դատարանը: Նրա մօտ է քաղաքի բերձան, որի վրա զեշեր ցերեկ գտնվում են ֆայետոնները: Այդ երեկոյ աւելի քան տասը ծառաներ իրանց լապտերներով թայրեանցի տան պառչաւմի վրա սպասում էին իրանց տիկիններին, որ տուն հասնեն: Այս բոլորից յայտնի է «ՕՃՅՈՐԵՆ» ստախօս թղթակցի զրպարտու-

թիւնները, որով նա կամեցել է արատաւորել մի պատուաւոր ընտանիք, որ պատիւ չէ բերում շատ անաթիւ ստախօսներին անգամ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՒԳԻԱ

Իրադրների մէջ տպված է հետևեալ թղթ-թակցութիւնը Բրիտանիայից:

Նորերումս Լեկենի մէջ բացվեցաւ Լէօպոլդ I փողոցի պետութեան այդ մեծ թաղաւորի արձանը: Բեկլիայի յիսունամեայ անկախութեան տօնը աւելի լաւ չէր կարող արտայայտվել, քան թէ ժողովրդի շնորհակալութեան հանդիսաւոր յայտնելով այն թաղաւորին, որին երկիրը պարտական է իր քաղաքական զարգացումով, իր սահմանադրական ազատութիւններով և իր պետական անկախութեամբ:

Սահմանադրական պետութիւններից ոչ մէկը այնպէս հարուստ չէ պետական խնայողութեան դասերով, որքան Լէօպոլդ I-ի թաղաւորութիւնը: Ներքայնիւր մարդ, որ ծագման իրաւունքով կամ ժողովրդի ընտրութեամբ նուիրում է իրան ժողովուրդներին քաղաքական վիճակի ղեկավարութեանը, իր գործունէութիւնը սկսելուց առաջ պէտք է ապացուցանի, որ ուսումնասիրել է Լէօպոլդ I-ի երկարամեայ թաղաւորութեան ձևերը և լաւ իրացրել է այն բոլոր սկզբունքները, որոնցով առաջնորդվում էր հանգուցեալ թաղաւորը: Ոչ մի թաղաւոր զահ չէ բարձրացել այնպիսի ծանր հանգամանքների ժամանակ, ինչպէս նա, որին երախտագէտ ժողովուրդը նորերումս արձան կանգնեցրի Լեկենի մէջ:

Լէօպոլդ առաջինը, պատկանելով գերմանական այնպիսի թաղաւորող տանը, որի իւրաքանչիւր անդամը նախապատել է ամենաանհասկանալի իշխանութիւնը, ըստովաբան էր նոր կազմակերպվող պետութեանը սովորեցնել սահմանադրական կենսաբան: Պէտք է ի նկատի առնել միևնոյն ժամանակ, որ այդ պետութիւնը մի աջող յեղափոխութեանց յետոյ կազմվեցաւ գաւառական և մասամբ միմեանց թշնամի տարրերից: Բեկլիական ժողովուրդը Լէօպոլդ I-ի թաղաւորութեան սկզբին թէ քաղաքական և թէ կրօնական կողմից աւելի երկպառակված էր, քան թէ այժմ: Բեկլիական ժողովուրդը, կազմված երկու թշնամի տարրերից, այսինքն ֆրամանդերներից և վալօններից, բոլորովին չունէր այն ազգային միութիւնը, որ ամրացնում է երիտասարդ պետութիւններին և միջոց է տալիս նրանց ընդդիմադրել ամենածանր դժուարութիւններին: Ֆրամանդները միշտ համակրել են իրանց ցեղակից գերմանացիներին, վալօնները թէ լեզուով, թէ ծագումով, թէ կրօնով և սովորութիւններով աւելի մօտ են ֆրանսիացիներին:

Գերմանիայի և ֆրանսիայի մշտական պատերազմների և յափշտակութեան նպատակ լինելով, Բեկլիան ոչ թէ միայն կարողացաւ պահպանել իր անկախութիւնը, այլ ամենաեռանդոտ ազգասիրութեամբ ձանաչեց իր ազգային առանձնութիւնը: Այդ բոլորի համար բեկլիական ժողովուրդը զխաւորապէս պարտական է իր սահմանադրական առաջին թաղաւորի գիպոլաւտիական ընդունակութիւններին: Լէօպոլդ I-ի թաղաւորութեան ժամանակ կղերականների և ազատամիտների կռիւը աւելի սաստիկ է եղել, քան թէ այժմ: Նրբ մի կուսակցութիւն զգում էր իր հակառակորդի յաղթութիւնների բոլոր ծանրութիւնը, այնուամենայնիւ նա երբեք

չէր կորցնում իր սէրը դէպի հայրենիք և յարգանք դէպի թաղաւորը: Բեկլիայի մէջ ոչ մի կուսակցութիւն իր ներքին շահերի համար երբեք օգուտ չէ քաղել դրացի պետութեան համակրութիւնից, կամ հակակրութիւնից, մինչդեռ այդ բանը պատահում է բոլոր ուրիշ երկիրներում:

Քանի որ ֆրանսիայի մէջ պարլամենտական եղանակի մտցնելը անյաղթելի դժուարութիւնների է հանդիպել, Լէօպոլդ I իր ժողովուրդին սովորեցրեց օգուտ քաղել սահմանադրական բոլոր ազատութիւններից և մի և նոյն ժամանակ նրա զահին, կամ հասարակական հանգամանքները երբեք վտանգ չէ սպառնացել: 1848 թուականի փոփոխիլը շատ զահեր շարժեց Ներօպայի մէջ, բայց Բեկլիային չէր կարողացաւ դիպչել: Լէօպոլդը ամենից լաւ իմացաւ հրաժարվել իր ծագումի և կրթութեան նախապաշարմունքներից: Նա ոչ թէ համբերում էր ազատութիւնը, իբրեւ անփախչելի չարիք, այլ հաւատում էր ազատութեանը, զիտէր որ նա աւելի լաւ էր բռնութիւնից, որ նա ամենից լաւ կարող էր ժողովրդական տարաբաղդութիւնների առաջն առնել:

Լիւդովիկ-Ֆիլիպպի նման նա չէր բաւականանում թաղաւորելով, առանց կառավարելու: Բնդհակառակը նա խառնվում էր ամեն տեսակ քաղաքական վիճերի մէջ, առանց ցանկութիւն ունենալու իր անձնական կամքը կատարել: 1846 թուին Բեկլիայի մէջ հրաւիրվեցաւ ազատամիտ կօնգրես: Լիւդովիկ-Ֆիլիպպի խորհուրդ էր տալիս Լէօպոլդին խանգարել կօնգրեսը, բայց այս վերջինը և այն ժամանակվայ կղերական մի նիստութիւնը չէր հետեցնի այդ խորհուրդին: Թաղաւորը հաւատում էր ազատութեան ոյժին: Նրկու տարուց յետոյ Լիւդովիկ-Ֆիլիպպի զահը և նրա սահմանադրական պետութիւնը ընկաւ, մինչդեռ Բեկլիական զահը մինչև այժմ ամուր է:

Բեկլիացիները սիրում են իրանց թաղաւորող տան անդամներին: Նիժէ Բեկլիայի մէջ մէկը վիրաւորի թաղաւորին, Գերմանիայի նման մասնութիւն չէ հարկաւոր նրան պատժելու համար: Եթէ ունիկղերները մինչև անգամ սօցիալիստներ լինեն, նրանք անպատիժ չեն թողնի վիրաւորողին:

Թղթակցութեան շարունակութեան մէջ նկարագրվում է արձանի բացման հանդէսը, որ շատ չբեղ և փառաւոր է եղել:

Արձանը ներկայացնում է հանգուցեալ թաղաւորին հետեւեալ կերպով: Նա ձախ ձեռքով պահում է ծիրանին, իսկ աջը այնպէս ունի բռնած, կարծես մի հանգստացնող մեկնութիւն է տալիս:

ԱՅՈՒՆԻՍՏԱՆ

«Standard» լրագրի Բոմբէյի թղթակիցը գրում է հետեւեալ գեներալ Բեթօուլի յաղթվելու մասին:

Կանդահարից ստացված լուրերը ամբողջ շնորհասանի մէջ եթէ ոչ յուսահատութեան գոնէ շփոթների առթիւ դարձան, մասաւանդ որ այդ լուրերը բոլորովին անսպասելի էին: շնորհասանի մէջ այնքան հաւատացած էին գեներալ Բեթօուլի ընդունակութեան մէջ, մինչ այն աստիճան սպասում էին, որ նրա զօրքերը կը կարողանային յաղթել Ելիւ-Լիւսին 12,000 անկանոն զօրքերին, որ ոչ ոք անհանգիստ չէր լինում այդ զօրքերի ապահովութեան մասին: Այդ զօրքերի յաղթվելը նկարագրող կարճատեւ հեռագիրը ամենքին զարմացրեց: Հենց որ ստացվեցաւ այդ հեռագիրը շնորհասանի փոխարեան հրաւիրեց իր խորհուրդը և թէպէտ խորհուրդի ժամանակ շատերը յոյս յայտնեցին, որ հեռագիրը կարող է սխալ լինել, կամ անցքը չափա-

զանցացրած, բայց ստացված հետեւեալ կարճատեւ հեռագիրները չարդարացրին այդ յոյսերը: Խորհուրդը իսկոյն պահանջեց Բոմբէյի նահանգապետի պատրաստ եղած զօրքերի ցուցակը և լաւ էր, որ Նիւ-Ալիի զօրքերի փախուստի պատճառով Բոմբէյի մէջ եղած անդիական զօրքերի մի մասը կազմակերպված և պատրաստված էր: Ամենից շատ այժմ անհանգստացնում է Կանդահարի ապահովութիւնը: Այդ քաղաքի կորցնելը անդիացիների համար մեծ կորուստ կարող է լինել, իսկ բնակիչների համար կատարեալ դժբաղդութիւն, որովհետեւ Ելիւ-Լիւսինը նրանցից վրէժխնդիր կը լինի անդիացիներին լաւ ընդունելու համար: Քաղաքը երեւի կը կորուստվի, եթէ կընկնի Ելիւ-Լիւսինի զօրքերի ձեռքը: Կարելից ստացված տեղեկութիւններից երևում է, որ անդիացիների յաղթվելը մեծ ազդեցութիւն կունենայ այնտեղի գործերի դրութեան վրա: Կարծում են, որ Ելիւ-Լիւսինի բռնած զիբը կը ստիպէ անդիացիներին փոխել իրանց նախկին լծիւնը թոյլ տալ Արգուրախմանի առանց անդիական զօրքերի օգնութեան բարձրանալ Աֆգանիստանի գահը: Անդիացիները ստիպված կը լինեն յետաձգել Կարուլի դատարկելը: Մինչև այժմ զինուորական մարդիկ չեն կարողանում մեկնել պատահածը: Կեռ երկու օր առաջ գեներալ Բեթօուլը հաղորդում էր, որ ինքը պաշտպանողական դիրք է բռնել և անկարելի է թուում որ 12,000 աֆգանական անկանոն զօրքերը կարողանային յաղթել պաշտպանված երեք գունդ անդիացիներին: Բացի հետեւեալ զօրքերից Բեթօուլը ունէր նոյնպէս երեք գունդ հնձեղազօրք, չը հաշվելով Նիւ-Ալիին հաւատարիմ մնացած հնձեղազօրքերը: Ելիւ-Լիւսինի զօրքերը 12,000 աւելի չէին կարող: Ստացված տեղեկութիւնների համեմատ անդիացի զինուորները առանձին խումբերով ուղեւորվում են Կարուլ, այնպէս որ զօրաբաժնի մի մասը ազատված կարելի է համարել: Կարծում են, որ այժմ Կանդահարի մէջ միայն 2000 անդիացի զինուորներ կան, որոնք փակվել են քաղաքի ամրոցի մէջ և օգնական զօրքերի են սպասում: Գեներալ Ֆէյր անյապաղ գնում է Կանդահարին օգնելու համար:

Անդլիական լրագիրները Աֆգանիստանի մէջ պատահած անցքերը զանազան կերպով են մեկնում նայելով, թէ նրանք ինչ ուղղութեան են պատկանում: Պահպանողական «Daily Telegraph» լրագիրը ասում է, որ Աֆգանիստանի մէջ պատահած վերջին անցքերի պատճառը սպաստամիտ միսիստութեան երկչոտութիւնն է, որ յետ է քաշվում Աֆգանիստանից: Նախկին կառավարութեան ժամանակ անդլիական զօրքերը այդպիսի վիճակի չէին եղել: «Daily News» լրագիրը ընդհակառակը պնդում է, որ յաղթութեան պատճառը պահպանողական կառավարութեան խելագար քաղաքականութիւնն էր: Այդ մարդիկը երևում էին, որ ձանաչում են աֆգանցիներին և խորհուրդ տուին գրաւել Կանդահարը: Այժմ երևում են այդ կորստաբեր քաղաքականութեան հետեւնները և անհրաժեշտ է վերադառնալ անգլո-հնդկական (Բրալուտօնի) քաղաքականութեան խելացի սկզբունքներին, այս նշանակում է Աֆգանիստանը իր վիճակին թողնել: «Times» լրագրի կարծիքով զինուորացուին այն է, որ վերջին անցքերի շնորհիւ աֆգանական զորքը շուտ չի վերջանայ: Ամենից առաջ պէտք է վերականգնել Անդլիայի զինուորական պատիւը և այնուհետեւ կարելի կը լինի ընտրել այն քաղաքականութիւնը, որին Անդլիան կը ցանկանայ հետեւել: «Standard» լրագիրը ուրախանում է, որ կառավարութիւնը վճռել է գործել շուտ և եռանդով: Անդլիայի նշանակութեան և նրա Աֆգանիստանի մէջ ունեցած կշռի վերականգնելը նոյնքան կատարեալ և անկա-

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ԹԱՐԻԻՉ
քաղաքի մի մասնաւոր դպրոցի
համար պահանջուած է մի հմուտ
ՎԱՐՃԱԴԵՏ ՀԱՅՈՑ ԵՒ
ՌՈՒՍԸՑ լեզուների համար
խիստ նպաստաւոր պայմաննե-
րով: Ցանկացողները կարող են
գիմել ՀԱՐԻՆՕՎԻ բարձրա-
սարան պ. ՍԵԼԻՔ-ԱՋԱՐԵԱՆ-
ՅԻ կանտորը:

ՁՈՐԵՔԱՔԹԻ, ՅՈՒԼԻՍԻ 30-ից կը սկսեն
հասարակական աճուրդով ծախել սնունդա-
ցած պարտատէր ԵՂԻՍԵՔԻ ԶԱՆՁՈՒՂԱԶՈՎ-
ՆԵՐԻ ապրանքները: Աճուրդը կը լինի ամե-
նայն օր 9 ժամից Զանգազուղի ՌԵՏԵՍ-
ՆԵՐԻ կանոնադրով գործիկական փողոցի վրա,
ՄՈՒՐՈՒՆՍԿԻ ամբի:

2—3

ԱՆԳՐԿՈՎԱԿԱՆ ՎԱՐՃԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Առաջիկայ 1880/81 ուսումնական տարին, ցան-
րիկացողներ ամար Սեմյարիա (վարժապե-
տական դպրոցը) մոնելու, կան 4 վաճառի-
ներ պատրաստական դաստան և 6 վաճառ-
սիւններ առաջին դաստան մէջ: Խնդիրները
ընդունելութեան մասին տրվում են մինչև 15
օգոստոսի: Մրցողական հարցաքննութիւնները
կը լինեն 20 օգոստոսից մինչև նոյն ամսի 25:
2—3 (1)

Ծախվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և
ԱՌՈՒՆԵՐ: Ելիսավորական փողոց № 46
Թիֆլիսում:

4—5

Շուտով լոյս կը տեսնէ ԳԱՇՆԱՄՈՒՐԻ ՀԱՄԱՐ
ԶԱՅՆԱԳՐԱԾ Ժողովրդական գործածական եր-
գերի:

Երկրորդ տետրակը
Ձայնագրութիւն և հրատարակութիւն
Յովհաննէս Սուղանաճանցի, և կը պա-
րունակէ իւր մէջ վեց երգեր:
1) «Ազնիւ ընկեր մեռածում եմ»
2) «Անապիշ անձայն»
3) «Բաժաններ առնուք, եղբարք»
4) Մեր հայրենիք, թշուառ անտէր»
5) «Հայոց աղջիկներ» և
6) «Հայրենիք Սրբազան»

Երկրորդ տետրակի զինք լինելու է մի
բուրլի, ցանկացողները ստանալ դաշնամուրի
համար ձայնագրած երգերի առաջին տետ-
րակը, որ պարտնաւում է իւր մէջ չորս
երգեր: 1) «Անի քաղաք», 2) «Բնձ համար,
չէ», 3) Յուրաք փչեց» և 4) «Մի՛ ծնունդ»
պէտք է ուղարկեն մի բուրլի, տասից աւելի
գնդներին 20 % զինք մէ լինում:

Նոյն հեղինակի մօտ վաճառվում է Գոր
ԵՐԳԱՐԱՆ ՖԻԵՏԻՈՒՆԻ, որի մէջ պարունակ-
վում են 50 հատ ընտիր նոր հրատարակ-
ված երգեր: Գինը 30 կոպէկ: Ցանկացողները
ստանալու է ձայնագրած երգերը, է՛ Ֆիէ-
տոնի նոր երգարանը, պէտք է ուղարկեն
մէկ բուրլի և 30 կոպէկ: Հետեւի հասցէով:
Въ Тифлисъ. Ивану Артемьевичу Сузана-
джянцъ На Петхайнской ул. собствен-
ный домъ № 13.

Համեմատելէք անգլիական կանոնի թէյն
գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ.,
1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆոնտի համար
այն թէյնի հետ, որոնք ուրիշ կանոններն
րում 30%-ով թանկ են ծախվում և այդ
կանոնի ֆոնտը 2 րուրկանոց թէյը, ու-
րիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ:

44—100

Տ Ա Վ Ս Ս

Ուսուցիչների համար, որոնք ծախվում
են Թիֆլիսի քաղաքներում, կանոններում
և մանածեղով, օգոստոսի 1-ից մինչև 15
ներկայ 1880 թւի:

Թ Ս Ա Վ Ս Ս

Յորենի ալիւրից

1 տեսակի 1 ֆունտ 5 կոպ.
2 » » » 4 »
3 » » » — —

Նոյն ալիւրից թանրի մէջ թխած

1 տեսակի 1 ֆունտ 6 կոպ.
2 » » » 4 1/2 »

Կրուպնատկայից կանոն ցորենի ալիւրի հետ
լաւաշ 1 տեսակի 1 ֆ. 8 կոպ.
2 » » » 5 1/2 »
3 » » » 5 »

Տաւարի միս

1 տեսակի 1 ֆ. 8 կոպ.
2 » » » 7 »

Սուկի » » 14 »
Ոչխարի միս » » 9 »

Այդ տեսակի չէ վերաբերվում գիւղական
արդիւնաբերողներին, որոնք ծախվում են իրանց
արդիւնքները Թիֆլիսի հրապարակների և
վաճառանոցների վրա:

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՄՆԱԿՆԵՐԻ ԶՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱ-
ԻՑՏԱՆ 9-ԻՑ ՄԻՆԶԵԻ 1 ԺԱՄԱՐ:

Երկուշաբթի. Գալթիօնի կանանց
հիւանդ. Գօրալի վիճ ներքին հ., Բօտի-
նե անց կանանց և երեխաների հ., Բիւււ-
րե անց խրուրդիական և աչքերի հ.,
Ծտեմբօրսի վիճերական և կաշու հ.,
Բաբայեան ջրային և հոգեկան հ.:
Երեքշաբթի. Միւնիկի վիճ խրուրդ-
գիական հ., Վ. Գօրօվ վիճերական և բողա-
ղի հ., Բիւււր աչքի հ., Բախուտով
մանկաբարձական, կանանց և երեխաների հ.,
Կրասնօգլիսի և Կ. Իսիցի և Վ. Ե-
միշի վիճերին հ.:
Չորեքշաբթի. Լիւնիցի և Բուդ-
ովսկի ներքին հ., Ծտեմբօրսի
կանոնական և կաշու հ., Աստուածատու-
րով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Վ. Գօրօվ վիճերական և
բողաղի հ., Բօտինե անց կանանց և երե-
խաների հ., Լիւնիցի և Վ. Եմիշի վիճ
ներքին հ., Բիւււր անց և Բիւււր և
սեռական օրգանների հ.:
Ուրբաթ. Գալթիօնի կանանց հ.,
Միւնիկի վիճ խրուրդիական հ., Կրասնօ-
գլիսի և Լիւնիցի վիճերին հ., Բա-
խուտով մանկաբարձական, կանանց և ե-
րեխաների հ., Ծտեմբօրսի և Աստ-
վածատուրով վիճերական և կաշու հ.,
Բաբայեան ջրային և ներքին հ.:
Շաբաթ. Լիւնիցի և Վ. Եմիշի վիճ
ներքին հ., Բաբօվ կուրքի հ., Եանկօ-
վսկի վիճերական և կաշու հ.:
Բացի այդ բժիշկ Վ. Գօրօվ բժշկանոցի
մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդ-
ներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբայեան չորեքշաբթի օրերը ա-
ռաւոտան 9-ից մինչև 11 ժամը ընդու-
նում է իր տանը բժշկանոցի հիւանդներին
էլէկտրական բժշկութեան և ներքին հ.
համար: Բնակարանը գտնվում է Սերգիև-
կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:
Առանձնաբոյժ Օրբիկտ աղքատ հիւան-
դներին բժշկանոցի տոմարով ընդունում է
ամենայն օր, ամենայն ժամանակ:
Բացի կիրակի օրերից ամենայն օր առա-
ւոտան 9—11 ժամը բժշկանոցում լինում է
մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու
համար:

Բժշկանոցի գերեկտօր Լիւնիցի:

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ (2.
ԳՐԻԳՈՐԵԱՆՅԻ) Կովկասեան Գրականաւանոցի և ծախ-
վում է քաղաքայէն նոյն տեղը:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇԽԵՐՀԵՐՈՒԹԵԱՆ ձեռ-
նարկներ աշխատասիրութեամբ Ն. ՄԱՄԻՈՆԵԱՆՅԻ:
Լ. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայերենագիտութեան դա-
սերի օրինակ տրուած է Թիֆլիզի հայերենագիտութիւնը),
հինգ պատկերներով, գինն է 35 կոպ.
Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ
պատկերներով, գինն է 60 կոպ.
գումարով աւանդներին զիջումն կը լինի: Մամուլի տակ
է Գ. ՏԱՐԻՆ մասը քաղաքական:

17—20

ԸՆԴՔԱՆՈՐԱԿՈՐ ԵՐԿՆԵՈՒ ԴԱՐՈՐԱԿ ԲԱՐՃՐ ԴԱՍԱ-
ՏԱՆԵՐ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՐ Ե ԵԿՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՒՆ
ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄ ԵՐԿՈՐԻ ՄԻ ՈՒՍՈՒՄԻՆ, ՈՐ ԱՆԱՐԱՄԱԾ ԼԻՆԻ
ՈՐ Ե ԲԱՐՃՐԱԳՈՅՆ ԴԱՐՈՐԱԿ, ԶԱՐԲԺԱԿԱՆ 24 ԴԱՍՈՎ:
ՑԱՆԿԱԳՈՅՆԵՐ ԻՐԱՆԵՐ ՍԱՅՄԱՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՅՄԱՆԵԼ
ԵՐԿՆԵՈՒ ԴԱՐՈՐԱԿՆԵՐԻ ՀՈՂԱՐԱՐԾՈՒԹԵԱՆԵՐ:

Հողարարձուք { Սարգիս Միրզայեանց.
 { Լսատուր Իսահակեանց.

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՒ ԸՆԿ. յայտնում է
այդ առևտրական տան գործերով բոլոր հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու
պատճառով այդ տան գլխաւոր գրասենեակը օգոստոսի 1-ից կը տեղափոխվի Գալթիօնի տան
վերին յարկը Գալթիօնի փողոցի և Երկանակայա հրապարակի անկիւնի վրա: Տուրքերի
տարւ և մուտքերի ստանալու համար գրասենեակը հասարակ օրերում բաց է լինում առա-
ւոտան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Գնում է 1 և 2 փութաւորութեան
տոմարներ և ծախում է նրանց այն պայմանով, որ գինը 12 ամիսների ընթացքում հասու-
ցանքին: Այդ պայմաններով մի տոմարի գնողը տարվայ ընթացքում մասն ունի տարածից
այն 20 համարների, որոնք ցայց են տրված վկայականի մէջ չորս տիրաժներին: Ցանկաբա-
րութեամբ գնում է և ծախում է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կայքեր, կովի-
սիայով ծախում է ապրանքներ և նիւթեր: Ծախում է տպված պայմանագրեր, բնակա-
րաններ, կանոններ և դատարի տեղեր քրէհով տարւ համար: Տուրքերին մինչև նոր կար-
գագորութիւնը վճարում է:

1) Պահելու համար մինչև պահանջելը 4 1/2%, պայմանաւոր 5 1/2%, 2) տուրքերին 6
ամսով 5 1/2%, 9 ամսով 6 1/2%, 1 տարով 7 1/2% 1 1/2 տարով 8 1/2%, 2 տարով և աւելի 9:
3) Այդ ընկերութեան 1 կապի պայ ունեցողներին մասնաւոր պայմանաւոր տուրքերին 9%:
Պարտաւորակցով յայտնի անձի ապահովութեամբ փող տարւ ժամանակ աւանում է մի
ամիս ժամանակով 10%, մի շաբաթ ժամանակով 9%:
Աւելի մանրամասն տեղեկութիւններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրա-
սենեակի կառավարչից:

10—10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՋ
ԵՒ
ՏԱՐԱԿԱՆ ՌԵՍՈՐՏԱՐԱՆ

Օգոստոսի 20-ից կը սկսուի քննու-
թիւնները և նորեկների ընդունելու-
թիւնը տղայոց և օրիորդաց 4—15
տարեկան հասակը:
ՏԱՐԱԿԱՆ ՌԵՍՈՐՏԱՐԱՆՈՒՄ ԲԱ-
ՑՈՒՆԵԼՈՒ Ե ԳԱՆՍՈՒՄ ՈՐ ԿԵՆՏՐՈՆՎԵՆ
ԳԵՇԵՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԵՆՏՐՈՆՎԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐՆԵՐ:

Բ. Միրզայեանց

Թիֆլիսի ՊՐՕԳՐԵՍԻՎԱ ՎԵՐՁԱՅՐԱԾ
Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաննե-
րում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի
ԵՐԻՏԱՍԱՐԻ ներկայ սեպտեմբերի 1-ից ցան-
կանում է ՌՈՒՍՈՒՑԻ ՊԱՇՏՈՆ ստանալ բա-
ցաւապէս ՌՈՒՍԻՑ լեզուից և ՌՈՒՐԱՆՈՒ-
ԹԵՆԻՑ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և դա-
ւառնելու: Ցեղեկանալ ԿԵՆՏՐՈՆՎԵՆ կամ
Ենթինջեանցի ԳՐԱՎԱՅԱՐԱՆՈՅՆԵՐՈՒՄ:

7—22

Յուլիսի 1-ից ՎԱՐՏԱՎՈՎԱՅԱ ՊԵՏԵՐՆԻԱ-
ՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ
կարելի կը լինի ստանալ ԿԱՑԵ, ԾՕԿՈՒԱԿ,
ԹԵՑ և պատրաստված հանքային զանազան
զրկեր:

31—40

ՄԻՆԱՍ ԳԻՒԼԱՏԵԱՆ, որ կանտորայ ունի
ԹԱԻԻԲ, քաղաքում ընդունում է ամեն տեսակ
ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ՑԱՆԶՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ և օ-
մի ու ռ ո Վ կատարելու անյապաղ, ամե-
նայն ճշտութեամբ, և գինում է պ. պ. վա-
ճառականներին, առաջարկելով իր ծառայու-
թիւնը:

5—5